

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԵՐԱՑՆԵՐԸ

Մ. Ե. ԱՍԱՏՐՅԱՆ

(Հարցի պատմությամբ համառոտ ակնարկ)

Հայերենի (ինչպես և օտար լեզուների) քերականությունների մեջ դերբայները հրկար ժամանակ ուսումնասիրվել են բայից անկախ որպես առանձին խոսքի մաս այն հիմունքով, որ նրանք իրենց մեջ համատեղում են բայի և անվան (գոյականի և ածականի) հատկանիշները: Մյուս կողմից՝ բոլոր դերբայներից առանձնացվել է բայի անորոշ ձևը որպես մի առանձին եղանակ՝ անհրկույթ եղանակ: Գրաբարի քերականությունների ավանդույթների ազդեցությամբ քննարկվող հարցն, օրինակ, այս ձևով է լուծված Ա. Այտընյանի և Ս. Պալասանյանի՝ աշխարհաբարի քերականություններում: Ա. Այտընյանը գրում է. «Դերբայ, չորրորդ փոփոխական մասն-բանի, թէ՛ անուան և թէ՛ բայի պաշտոնը միանգամայն կը կատարէ. զորօրինակ եթէ ըսեմ՝ Աշխատելէն ետքը, աշխատիլ բայ է՝ վասնզի գործողութիւն կը ցուցընէ, և միանգամայն անուն է հոլոված, որ նոյն էր թէ ըսէի՝ Աշխատութենէ ետքը»¹: Նա ընդունում է հրկու կարգի՝ գոյական և ածական դերբայներ, որոնք «երբեմն բայի տեղ ալ կը բանին»: Արեւմտահայերենի դերբայները ըստ Ա. Այտընյանի չորսն են՝ անհրկույթ-տեսնել, ընդունելություն-տեսնող, անցյալ-տեսած, տեսեր, ապառնի-տեսնելիք: Լեզվաբանն, այնուհետև, ծանոթության կարգով գրում է, որ որոշ քերականներ վերջին երեք դերբայները կոչում են ընդունելություն ներկա (տեսնող), ընդունելություն անցյալ(տեսած), ընդունելություն ապառնի(տեսնելիք)²: Այստեղ հարկ է նշել, որ ըստ Ա. Այտընյանի դերբայն ընդհանրապես (և ոչ թե անորոշ դերբայը) բայի եղանակներից մեկն է. բայն ունի 4 եղանակ՝ սահմանական, ստորադասական, համայական և դերբայ՝ իր երեք ժամանակներով՝ անհրկույթ, ընդունելություն, անցյալ³ (այսպիսի մոտեցմամբ այստեղ սպասելի էր նաև ապառնին, որը, չգիտես ինչու, չի հիշատակվում):

Ս. Պալասանյանի քերականական համակարգը շատ կողմերով նույնանում է կամ մոտենում Ա. Այտընյանի քերականական համակարգին և նա, առանձին տարբերություններով հանդերձ, դերբայների հարցը սկզբունքորեն լուծում է Ա. Այտընյանի նման: Ս. Պալասանյանը հետևյալ կերպ է բնորոշում դերբայները: «Այն բառերը, որոնք գործ են ածվում իբրև բայ և միանգամայն իբրև գոյական կամ ածական անուն, կոչվում են դերբայ: Չեմ տեսած բայ է, տեսած (բաներս) ածական, իսկ տեսածնեւս գոյական»⁴: Լեզվաբանը արեւելահայ գրական լեզվում ընդունում է չորս դերբայ՝ անորոշ, ներկա (ող), անցյալ (երկու

¹ Ա. Այտընյան, Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1883, էջ 70:

² Նույն տեղում, էջ 70:

³ Նույն տեղում, էջ 42:

⁴ Ս. Պալասանյան, Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1906, էջ 77:

տարրերակներով՝ ել և ած) և ապառնի (ույ)։ Դրանցից անորոշը միաժամանակ նաև բայի եղանակներից մեկն է՝ աներևույթ եղանակ։ «Անորոշ եղանակը բայի սկզբնական ձևն է, ինչպես ուղղական հոլովը գոյականների մեջ։ Այս եղանակով առարկայի գործողության լոկ անունը հիշվում է, առանց որոշելու թե ո՞վ կամ ե՞րբ է ներգործում. այս պատճառով էլ կոչվում է անգործ։ Գնալ անորոշ եղանակ է՝⁵ 1) Պալասանյանի քերականության վրա ընդհանրապես զգացվում է գրաբարի քերականական ավանդույթների ազդեցությունը. նա այս կամ այն շտիկով կաշկանդված է գրաբարի քերականության կաղապարներով։ Խերեալ դրանով կարելի է բացատրել, որ Ս. Պալասանյանը չի նկատում ու արժեքավորում արևելահայ գրական լեզվի համար այնքան բնորոշ և նրա քերականական կառուցվածքի մեջ կարևոր դեր կատարող անկատար դերբայը (յորում, կարդում)՝

ժամանակակից հայոց լեզվի ուսումնասիրության որակապես նոր փուլ է սկսվում՝ ահադ. Մ. Աբեղյանի քերականական աշխատություններով։ Պրոֆ. է. Աղայանը իրավացիորեն դրում է. «Մինչև նրա (Մ. Աբեղյանի — Մ. Ա.) ուսումնասիրությունների երևան գալը աշխարհագրորդի քերականական երևույթների նկարագրությունը առավել կամ պակաս չափով կախման մեջ էր գրաբարի սխեմաներից։ Աբեղյանն առաջինն էր, որ ուսումնասիրեց աշխարհագրորդի զբաղմունքի անկախ, այսպես ասած՝ ինքն իր մեջ, դիտելով այն իբրև մի ինքնուրույն ու անկախ համակարգ։ Հենց սրանով էլ նա հիմք դրեց մեր գրական լեզվի համաամական կառուցման ուսումնասիրությանը⁶։ Խորապես ուսումնասիրելով հայոց լեզուն և կանգնած լինելով իր ժամանակի լեզվաբանական գիտության բարձունքներում՝ Մ. Աբեղյանը հորինեց յուրահատուկ քերականական համակարգ, որի ոգին, եթե կարելի է այսպես արտահայտվել, բայն է, որը «ներծծված է» րոյի գերիշխանության գաղափարով։ Քանի որ Մ. Աբեղյանը բայ ասելով հասկանում էր միայն դիմավոր ձևերը, որոնք բայիմաստի հետ միաժամանակ արտահայտում են նաև ժամանակ, դեմք ու թիվ և, հետևաբար, նաև ստորոգում, — դրանից ինքնին բխում է, որ դերբայները պետք է հանվեին բայ խոսքի մասի ոլորտներից։ «Դեբայ ասվում են այն անունները և ածականները, որոնք ցույց են տալիս բայական իմաստ առանց դեմքի։ Դերբայները լինում են բայանուն կամ անորոշ դերբայ և բայածականներ։ Բայածականներն իրենց կողմից լինում են անկատար, ապառնի, անցյալ և ենթակայական դերբայներ։

Դերբայներն իսկապես բայ չեն, այլ բայի հիմքից կազմված անուն կամ ածական (մականուն, մակբայ), — դրել է նա⁷։

Մ. Աբեղյանն արդի հայերենում ընդունում է հետևյալ դերբայները. անորոշ (գնալ, ասել), անկատար՝ ում և իս վերջավորություններով (գնում, գնալիս), ապառնի՝ ու և իմ վերջավորություններով (գնալու, գնալիք), անցյալ՝ ել և ած վերջավորություններով (գնացել, գնացած) և ենթակայական (գնացող)⁸։

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 77—78։

⁶ Նույն տեղում, էջ 59—60։

⁷ Այս մասին տե՛ս Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953, էջ 35։

⁸ Է. Աղայան, ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967, էջ 305։

⁹ Մ. Աբեղյան, Աշխարհագրորդի քերականություն, Վաղարշապատ, 1906, էջ 100։

¹⁰ Նույն տեղում, էջ 100—102։

«Հայոց լեզվի տեսության» մեջ այս դերբայները մյուս խոսքի մասերի մեջ տեղաբաշխվում են հետևյալ ձևով. անորոշ դերբայները՝ գնալ, ասել, դրիլ համարվում են գոյական, ապառնի, հարակատար և ենթակայական դերբայները՝ գրելու, գրած, գրող-ածական, իսկ անկատարի երկրորդ ձևը՝ գալիս, դրելիս-մակբայ¹¹:

Նկատելի է, որ անկատարի առաջին ձևը (գրում, կարդում) և վաղակատար դերբայը (գրել, կարդացել), որոնք «Աշխարհաբարի քերականության» մեջ համարված էին բայածականներ, «Հայոց լեզվի տեսության» մեջ արդեն որպես ածականներ չեն հիշատակվում, և ընդհանրապես պարզ չէ, թե որ խոսքի մասի մեջ են մտնում վերոհիշյալ ձևերը:

Ծիշտ է, դերբայների արեղյանական ըմբռնումը իրավացիորեն քննադատվում ու մերժվում է հետագա շրջանի քերականների կողմից, բայց և միաժամանակ պետք է նշել, որ նա օբյեկտիվորեն ընդլայնում ու խորացնում էր դերբայների բայական ըմբռնումը, չնայած որ ինքը, իր յուրահատուկ քերականական համակարգից ելնելով, դերբայները դուրս էր թողնում բայի ոլորտներից՝ բայ համարելով միայն դիմավոր, եղանակային ձևերը:

Դերբայների՝ Մ. Արեղյանի ըմբռնումը ներքնապես հակասական էր և քննադատության ենթարկվեց խորհրդային շրջանի՝ մասնավորապես պրոֆ. Ա. Ղարիբջանի և պրոֆ. Գ. Սևակի քերականական աշխատություններում: Նախ այս քերականները ճշտեցին ժամանակակից հայերենի դերբայների քանակը, նախորդ քերականներն ընդունում էին մի անցյալ դերբայ ել (վաղակատար) և ած (հարակատար) վերջավորություններով կամ տարբերակներով: Նկատի ունենալով դրանց իմաստային ու կիրառական տարբերությունները՝ դրանք իրավացիորեն դիտվեցին որպես անկախ ու ինքնուրույն դերբայներ: Մյուս կողմից՝ հաշվի առնելով պայմանական եղանակի ժխտական ձևերի կազմությունը, ինչպես՝ չեմ գրի, չես գրի, չի գրի... չեմ կարդա, չես կարդա, չի կարդա..., չէի գրի... չէի կարդա և այլն, որոնք նախորդ շրջանում գործածվում էին նաև չեմ գրի, չեմ կարդա, չէի գրի, չէի կարդա ձևերով (անորոշ դերբայ)՝ պրոֆ. Ա. Ղարիբջանը տարբերակեց մի նոր դերբայ՝ ըղձական, նկատի ունենալով դրա ձևական նմանությունը ըղձականի ապառնու եզակի երրորդ դեմքի հետ (գրեմ, գրես, դրի, կարդամ, կարդաս, կարդա): Հետագայում այս դերբայը վերանվանվեց ժխտման կամ ժխտական դերբայ:

Սակայն ավելի կարևորը դերբայների խոսքի-մասային պատկանելության վերջնական լուծումն էր:

Եթե նախորդ քերականները դերբայները համարում էին առանձին խոսքի մաս, իսկ Մ. Արեղյանը դրանք տեղաբաշխում էր տարբեր խոսքի մասերի մեջ, ապա Ա. Ղարիբջանն ու Գ. Սևակը ընդարձակեցին բայի սահմանները՝ նրա մեջ ներառնելով նաև դերբայական ձևերը, որովհետև բայի, որպես խոսքի մասի, հիմնական հատկանիշները համարվեցին բայիմաստը (գործողության իմաստը), սեռը և խնդրառությունը¹² (և ոչ թե ստորոգումը):

Այսպիսով բայի մեջ դիտարկվեց երկու դրսևորում: Միայն խոսքի մեջ կարող է հանդես գալ և հանդես է գալիս երկու ձևով՝ դիմավոր և անդեմ, — գրում է Գ. Սևակը: Միայն անդեմ ձևը ունի միայն բայական հիմնական հատկանիշ-

¹¹ Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 100:

¹² Տճ՝ Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955, էջ 286—287:

ներքև¹³, այսինքն՝ բաշխման, սեռ և խնդրառություն և հենց այսքանով էլ բայ-
լ և անկապտելի է բայական համակարգից:

Լեզվաբանը միաժամանակ ուշադրություն է դարձնում այն հանգամանքի-
վրա, որ «դերբայները բայ չհամարելը ոչ միայն դերբայների, իբրև խոսքի
մասի, հիմնական իմաստն է անտեսում ու սքողում, այլև բայն է իբրև խոսքի
մաս լուծարի ենթարկում, եթե ոչ ամբողջապես, գոնե զգալի մասով»¹⁴, քանի
որ սահմանական եղանակի 9 ժամանակներից 8-ը կազմվում են դերբայով ու
«ժանդակ բայով, ուրեմն և դրանք բայի խոնարհման ձևեր չեն (ինչպես որ
խոնարհման ձևեր չեն համարվում մեծ եմ, մեծ ես, ուրախ եմ, ուրախ ես և
այլ ձևերը)»: Գ. Սևակն իր մտքերն ամփոփում է հետևյալ կերպ. «Դերբայները
բայ չհամարել չի կարելի՝ նկատի ունենալով նրանց թե՛ ընդհանուր (հիմնա-
կան) իմաստը և նրա հետ կապված սեռն ու խնդրառությունը, թե՛ այն, որ
բայը խոնարհվում է ըստ մեծի մասին դերբայների միջոցով. առանց դերբայի
բայի կատարյալ խոնարհում հայերենում չկա: Մեր դպրոցական նոր քերա-
կանությունն այդ կնճռոտ հարցը լուծել է՝ բայը իբրև խոսքի մաս առանձնաց-
նելով թե՛ ստորոգյալից, թե՛ մանավանդ, նախադասությունից, և բայի մեջ
գիտելով երկու դրսևորում, արտահայտություն կամ ձև, այն է՝ եղանակային
կամ դիմավոր բայեր և անդամ բայեր կամ դերբայներ»¹⁵: Այս դրույթները
ամուր կերպով մտան հայերենի քերականագիտության մեջ:

Հայոց լեզվի դերբայների ամբողջական ուսումնասիրությանն է նվիրված
Կ. Արրահամյանի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշա-
նակությունը» (1953 թ.) աշխատությունը, որտեղ լեզվաբանը փաստական
հարուստ նյութի հիման վրա քննում է հայերենի դերբայների ձևավորման
ակունքները, զարգացումն ու փոփոխությունները, լեզվի տարբեր փուլերում
նրանց ունեցած կոնկրետ դրսևորումները: Այս աշխատությունը հայերենի դեր-
բայական ձևերի պատմական հանգամանալից մի հետազոտություն է:

Հատուկ արևելահայերենի դերբայների քննությանն է նվիրված նույն հե-
ղինակի «Բայր ժամանակակից հայերենում» (1962 թ.) ստվարածավալ զրբի
դրույթներից մեկը՝ «Ժամանակակից հայերենի դերբայական ձևերը» (էջք
357—418):

Վերահիշյալ աշխատությունների տեսական մասերում հեղինակն ընդու-
նում է և հավաստում Գ. Սևակի դրույթներն ու տեսակետները բայի մասին ընդ-
հանրապես և դերբայական ձևերի մասին մասնավորապես: Շեշտելով այն
միտքը, որ բայը խոսքի մեջ դրսևորվում է երկու ձևով՝ դիմավոր-եղանակային
և անդամ-դերբայական, Կ. Արրահամյանը ճիշտ կերպով նշում է, որ բայի
դիմավոր և անդամ ձևերը սերտ կերպով կապված են իրար հետ: «Անալիտիկ
կազմություն ունեցող դիմավոր ձևերն առանց դերբայների գոյություն չունեն
և պատկերացնելի չեն: Ուսումնասիրելով հայերենի բայն իր զարգացման ըն-
թացքի մեջ՝ գրավոր լեզվի բոլոր շրջաններում և բարբառներում, տեսնում ենք,
որ դերբայական ձևերի ճնշող մեծամասնությունը (նույնիսկ անորոշն ու են-
թակայականը) հանդես են գալիս դիմավոր ձևերի (բաղադրյալ ձևեր) կազմու-
թյան մեջ»¹⁶: Դերբայական ձևերը շնայած չեն արտահայտում և չունեն դեմքի,

13 Նույն տեղում, էջ 287:

14 Նույն տեղում, էջ 294:

15 Նույն տեղում, էջ 295:

16 Կ. Արրահամյան, Հայերենի դերբայները..., էջ 41—42:

թվի, եղանակի, ժամանակի քերականական կարգերը, բայց բայեր են, քանի որ նրանց հատուկ են բայական հիմնական հատկանիշները՝ բայիմաստ, սեռ, խնդրառություն և մասամբ կերպ: Բացի այդ հատկանիշներից, ըստ Ա. Աբրահամյանի, անդեմ ձևերն ունեն դերբայական հատուկ իմաստ: Իսկ ո՞րն է դա: «Այդ իմաստը դերբայի մեջ դրսևորվող գործողության կամ եղելության վիճակն է, որ առանձին դերբայների մեջ (ապառնի, վաղակատար, հարակատար, անցյալ) առավել ցայտուն լինելով՝ մոտենում է ժամանակի կատեգորիային, սակայն չի ստանում ժամանակի կատեգորիայի որոշակիություն»¹⁷:

Ելնելով այսպիսի ըմբռնումից, Ա. Աբրահամյանը տալիս է դերբայների հետևյալ բնորոշումը. «Դերբայական ձևեր կամ դերբայներ են կոչվում բայի անդեմ ձևերը, որոնք բայական մի շարք հատկանիշների հետ գործողությունը կամ եղելությունը դրսևորում են տարբեր վիճակներում»¹⁸:

Լեզվաբանը ժամանակակից հայերենում ընդունում է՝ անորոշ (գրել), անկատար՝ ում և իս տարբերակներով (գրում, գրելիս), ապառնի՝ ու և իք տարբերակներով (գրելու, գրելիք), վաղակատար (գրել), հարակատար (գրած), ենթակայական (գրող), ժխտման (գրի) և որոշ վերապահությամբ ընթացակցական (գրելեն) դերբայներ:

Դերբայական ձևերի մեջ տեսնելով գործողության վիճակի արտահայտություն՝ Ա. Աբրահամյանը փորձում է դերբայները դասակարգել ըստ գործողության վիճակի արտահայտման յուրահատկությունների: Ըստ այդմ նա ժամանակակից հայերենի դերբայները բաժանում է երեք խմբի. ա) տարտամ, անորոշ և հետևաբար թույլ դրսևորում ունեցող վիճակ արտահայտող դերբայներ՝ անորոշ, ժխտական, բ) ցայտուն, բայց ոչ ժամանակային վիճակ արտահայտող դերբայներ՝ անկատար, ենթակայական, գ) ժամանակային ընդհանուր վիճակ արտահայտող դերբայներ՝ ապառնի, վաղակատար, հարակատար»¹⁹:

Հայերենի հոլովման ու խոնարհման համակարգերը նորագույն կառուցվածքային լեզվաբանության դիրքերից են քննված պրոֆ. է. Աղայանի «Ժամանակակից հայերենի հոլովումն ու խոնարհումը» (1967 թ.) աշխատության մեջ: Վերջինս, նախորդ քերականների նման, ժամանակակից հայերենի բայաձևերի մեջ որոշակիորեն տեսնում է երկու կարգ՝ «դերբայներ կամ ոչ եղանակային ձևեր և դիմավոր կամ եղանակային ձևեր»: է. Աղայանը խիստ քննադատում է Ա. Աբրահամյանի կատարած՝ դերբայների խմբավորման փորձը. «Այս խմբավորումները տարտամ են, ոչինչ չասող և, մանավանդ, արհեստական ու մտացածին: Զանազան կարգի դերբայները խառնված են միմյանց, որից և շփոթ է ստեղծվել. ժամանակային հատկանիշ է վերագրվել ապառնիին ու վաղակատարին, որոնք ժամանակի քերականական կարգից զուրկ են, ժամանակ չի վերագրված ենթակայականին, որ ունի ժամանակ»²⁰:

Եթե Ա. Աբրահամյանը դերբայների մեջ տեսնում էր վիճակի դադավար, ապա է. Աղայանը տեսնում է կերպի և վիճակի դադավարներ: «Դերբայ ասելով մենք հասկանում ենք այն անդեմ բայաձևերը, որոնք արտահայտում են կերպային կամ վիճակային իմաստներ»²¹: է. Աղայանը դերբայները բաժանում

¹⁷ Նույն տեղում, էջ 42:

¹⁸ Նույն տեղում, էջ 44:

¹⁹ Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, էջ 363:

²⁰ է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, էջ 344:

²¹ Նույն տեղում, էջ 344—45:

է երկու խմբի՝ կերպային դերբայներ-անկատար (կարգում), ապառնի (կարդալու), վաղակատար (կարդացել), ժխտման (կարդա), վիճակային դերբայներ-անկատար II (կարդալիս), հարակատար (կարդացած), ենթակայական (կարդացող), ապառնի II (կարդալիք) և որոշ վերապահություններով ձևի (կարդալեն)։ Այս խմբավորումից դուրս է մնում անորոշը, որի կերպային-վիճակային իմաստը բնորոշվում է որպես անորոշ իմաստ։

Կերպային դերբայներն արտահայտում են գործողության ընթացքը, կերպով, բայց որում անկատարը արտահայտում է շարունակական, վաղակատարը՝ ավարտված, իսկ ապառնին՝ կատարելի կերպային իմաստ (հիշենք Մ. Արեղյանի կերպերի տեսությունը)։ «Այսպիսով, — գրում է է. Աղայանը, — անկատար, վաղակատար և ապառնի դերբայները եռակի հակադրություն են կազմում՝ կատարվող, կատարյալ, կատարելի կերպային իմաստներով և, օժանդակ բային միանալով, արտահայտում են այդ կերպերի և տվյալ ժամանակի հարաբերությունը»²²։ Ժխտման դերբայն «արտահայտում է հնարավորության ազդու կերպային իմաստ, որ և օժանդակ բայի ժխտական ձևերի հարդարությամբ բացասվում է»²³։

Այս դերբայները բնութագրվում են նաև իրենց գործառական առանձնահատկություններով։ «Կերպային դերբայները ցույց են տալիս գործողության ընթացքը և հանդես են գալիս միայն ժամանակային ձևերի՝ օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերի հարադրությամբ, որով և գործառական տեսակետից բնորոշվում են որպես եղանակային բաղադրյալ ձևերի բաղադրիչ։ Նրանք բառային անկախ գործածություն չունեն և ինքնին չեն կարող լինել նախադասության անդամ։ Վերջապես, նրանցից նաև բառեր չեն կազմվում, ուստի և։ Նրանք հիմնականում դեր չունեն»²⁴։

Վիճակային դերբայները հակադրելով կերպային դերբայներին՝ է. Աղայանը գրում է։ «Վիճակային դերբայները ցույց են տալիս ոչ թե բուն իսկ գործողություն, այլ դրա հետ իբրև ենթակա կամ խնդիր առնչվող առարկայի վիճակը. այսպես՝ գնացող, կարդացող, վաղող և նման դերբայներն արտահայտում են ոչ թե գնալ, կարդալ, վազել բայերով արտահայտված գործողությունների որևէ վիճակ, այլ որևէ առարկայի վիճակը, որևէ առարկա, որը կատարում է այդ գործողությունները»²⁵։ Այնուհետև նշելով, որ ենթակայական դերբայի ավանդական անվանումը որպես գործողի անուն, մի բան անող կամ եղող առարկա, գործողության ընթացքի մեջ գտնվող առարկա ճիշտ է արտահայտում այդ դերբայի էությունը և իմաստային տեսակետից զուգահեռ անցկացնելով ենթակայական ու հարակատար դերբայների միջև՝ լեզվաբանը գրում է։ «Քննած, իմած, կարդացած և նմանները ցույց են տալիս ոչ թե գործողության, այլ առարկայի վիճակ։ Այդ դերբայները իմաստային տեսակետից նույնն են քննող, իմող, կարդացող դերբայների հետ, այն տարբերությամբ միայն, որ մեկն արտահայտում է առարկայի վիճակը՝ որպես որևէ ժամանակի զուգորդող, այդ ժամանակակետում հանդես եկող վիճակ, իսկ մյուսը՝ նախորդած վիճակ։ Այստեղ էլ, ուրեմն, երկու դերբայների արտահայտած վիճակների միջև կա ժամանակային տարբերություն՝ տվյալ ժամանակին զուգորդող

²² Նույն տեղում, էջ 346։

²³ Նույն տեղում։

²⁴ Նույն տեղում, էջ 347։

²⁵ Նույն տեղում։

և նախորդած՝ անցյալում ստեղծված վիճակ²⁶։ Եվ որովհետև հարակատար դերբայն արտահայտում է առարկայի վիճակ և ոչ թե գործողության կերպ, ուրեմն և ըստ է. Աղայանի չի կարող լինել հղանակային ձևերի բաղադրիչ։

Ենթակայական և հարակատար դերբայների զուգակիցն է ապառնի(իք) դերբայը, որը ևս առարկայի վիճակ է արտահայտում։ Այս դերբայն «արտահայտում է կատարելիության գաղափար և ցույց է տալիս դարձյալ առարկայի վիճակը, իբրև սպասվող, կատարելու վիճակ, այլ կերպ ասած, նա ցույց է տալիս տվյալ ժամանակակետին հաջորդելու վիճակ և ապառնի է»²⁷։

Վերջ ի վերջո է. Աղայանը ենթակայական, հարակատար և ապառնի(իք) դերբայների միջև տեսնում է սոսկ ժամանակային տարբերություն. ենթակայականն ունի ներկայի, հարակատարը՝ անցյալի, իսկ ապառնին(իք)՝ ապառնի ժամանակային հատկանիշ։ Այս երեք դերբայները, հիմք ընդունելով նրանց շարահյուսական կիրառությունը, նա կոչում է ռոզչական-վիճակային դերբայներ։

Զտնելով, որ անկատար դերբայի, այսպես կոչված, առաջին ու երկրորդ ձևերը կամ տարբերակները (գրում, գրելիս) իմաստով ու գործառությամբ տարբեր են և, հետևաբար, անկախ ու ինքնուրույն դերբայներ են, է. Աղայանը անկատարի իս ձևը, նկատի ունենալով նրա իմաստն ու շարահյուսական կիրառությունը, վերանվանում է ժամանակի դերբայ։ Վերջինս եմ (շորորալեն) վերջավորվող դերբայի հետ միասին, որն ինքը, կրկին նկատի ունենալով նրա իմաստն ու շարահյուսական կիրառությունը, անվանում է ձևի դերբայ, հորջորջում է մակբայական դերբայներ։

Այսպիսով, է. Աղայանը ժամանակակից հայոց լեզվում ընդունում է 10 դերբայ (ձևի դերբայը վերապահությամբ), որոնք խմբավորվում են հետևյալ կարգերի մեջ.

1. Բացարձակ կամ ընդհանուր.— անորոշ.

2. Կերպային.— անկատար, վաղակատար, կատարելի, ժխտման.

3. Վիճակային.— ա) որոշական.— ենթակայական, հարակատար, ապառնի, բ) մակբայական.— ժամանակային, (ձևի)։

Այս բոլորը ցույց են տալիս, որ է. Աղայանը նոր դիրքերից է մոտենում հայերենի դերբայների հարցին, նրանց գնահատման ու արժեքավորման հարցին՝ արտահայտելով մի շարք խորաթափանց մտքեր, որոնք անշուշտ կընդունվեն հայ քերականագիտության կողմից։ է. Աղայանի ուսումնասիրությունից ամենից առաջ պարզ է դառնում, որ հայերենի տարբեր դերբայները կամ դերբայների տարբեր խմբերը իմաստային ու կիրառական տարբեր առանձնահատկություններ են երևան հանում, հետևաբար և նրանք բոլորը չեն կարող քննվել նույն հարթության վրա՝ մի բան, որ սովորաբար անտեսվում կամ հաշվի չէր առնվում նախորդ շրջանի քերականական հետազոտությունների մեջ։

Ծիշտ պետք է համարել նաև լեզվաբանի կողմից մի շարք կոնկրետ հարցերի լուծումը, օրինակ՝ մի կողմից ում և իս, մյուս կողմից ու և իք վերջավորվող ձևերի առանձնացումը որպես անկախ ու ինքնուրույն դերբայներ (թե որքանով են ընդունելի նրանց անվանումները, այդ արդեն այլ հարց է)։

²⁶ Նույն տեղում, էջ 349։

²⁷ Նույն տեղում, էջ 356։

Սակայն, այս բոլորով հանդերձ՝ չի կարելի շնչել, որ է. Աղայանի դրույթների ու հարցադրումների մեջ կան վիճելի կետեր:

Այնպիսի առաջ այսպես կոչված կերպային ու վիճակային դերբայների հարցը, որ գրում, գրել, գրելու, գրի (անկատար, վաղակատար, ապառնի և ժխտման դերբայներ) ձևերը՝ մի կողմից և գրող, գրած, գրելիք, գրելիս (ենթակայական, հարակատար, ապառնի II, անկատար II) ձևերը՝ մյուս կողմից, իմաստով իրարից տարբեր են, դա անվիճելի է, և դրա մասին խոսք լինել չի կարող: Բայց ո՞րն է այդ ձևերի իմաստային տարբերությունը, արդյոք ա՞յն, որ առաջինները գործողության կերպ, իսկ երկրորդները առարկայի վիճակ են արտահայտում, Բայց չէ՞ որ վերջիվերջո գործողության կերպերը (կատարվող, կատարված, կատարելի) ինքնին գոյություն չունեն, նրանք արտահայտում են առարկայի գործողությունը, ուրեմն և կապված են առարկայի հետ: Իսկ սա էլ իր հերթին նշանակում է, որ այն դրույթը, թե այսպես կոչված կերպային դերբայներն արտահայտում են գործողության կերպ, իսկ վիճակային դերբայները՝ առարկայի վիճակ, դժվար թե ընդունելի համարվի: Մյուս կողմից՝ ասենք նաև այն, որ է. Աղայանը վիճակային դերբայների մեջ տեսնում է նաև կերպի գաղափար: («Ենթակայական և հարակատար դերբայները ցույց են տալիս առարկայի վիճակ՝ գործողության (վիճակի) ջարդանակական կերպով, առաջինը՝ ներկա, երկրորդը՝ անցյալ ժամանակով»): Սակայն կարծում ենք, որ այսպես կոչված «կերպային» և «վիճակային» դերբայների տարբերությունն ամենևին էլ այն չէ, թե առաջինները գործողության կերպ, իսկ երկրորդները՝ առարկայի վիճակ են արտահայտում, այլ այն, որ առաջինները գործողությունն արտահայտում են «մաքուր», «անխառն» ձևով, իսկ երկրորդները գործողության հետ միասին դրսևորում են նաև այլ և այլ խոսքի մասային իմաստներ: Է. Աղայանը այսպես կոչված վիճակային դերբայների մեջ տեսնում է ժամանակ, իսկ՝ կերպային դերբայների մեջ՝ սոսկ գործողության ընթացք, կերպ, առանց ժամանակի դադափարի: Մենք վերևում տեսանք, որ նա քննադատում է Ա. Աբրահամյանին այն բանի համար, որ վերջինս ժամանակային հատկանիշ է վերադրել ասպառնիին ու վաղակատարին (փախչելու, փախել), որոնք ըստ է. Աղայանի ժամանակի քերականական կարգից դուրկ են, ժամանակ չի վերագրել ենթակայականին, որը ժամանակ ունի: Ըստ է. Աղայանի տեսակետի, ասինք, կարդացող, կարդացած, կարդալիք ձևերը ժամանակ են արտահայտում (ներկա կամ զուգորդող, անցյալ կամ նախորդող և ապառնի կամ հաջորդող), իսկ՝ կարդում, կարդացել, կարդալու ձևերը սոսկ կերպ (կատարվող, կատարված, կատարելի) են արտահայտում՝ զուրկ լինելով ժամանակից: Բայց մեր կարծիքով, դո՞նե հայերենում, ժամանակն ու կերպը չեն կարող այսպես կտրուկ կերպով սահմանափակվել ու հակադրվել: Եթե ժամանակի դադափարի արտահայտություն ենք տեսնում կարդացող, կարդացած և կարդալիք ձևերի մեջ, ապա այս նույն գաղափարը պետք է տեսնենք նաև կարդում, կարդացել և կարդալու ձևերի մեջ, որոնք արտահայտում են կատարվող, կատարված և կատարելի գործողություններ: Եթե կարդում, կարդացել, կարդալու ձևերը ընդհանրապես զուրկ են ժամանակի գաղափարից, ապա այդ ինչպե՞ս է, որ նույն օժանդակ բայի հետ նրանք հանդես են գալիս որպես տարբեր ժամանակների արտահայտիչներ կամ կազմիչներ: Այս թուուցիկ վերլուծություններն էլ բավական են համոզվելու, որ հարցը վիճելի է:

Համառոտակի այսպես են ներկայանում հայ քերականների՝ ժամանակակից հայերենի դերբայների մասին արտահայտած տեսակետներն ու դրույթները, որոնց քննադատական շարադրանքով ընդհանուր ձևով ուրվագծվեցին քերական հարցերի այն շրջանակները, որոնք չեն լուսաբանված կամ բավարար չափով չեն լուսաբանված: Այդ հարցերի վրա էլ իր ուշադրությունը պետք է սևեռի ժամանակակից հայ քերականագիտությունը:

НЕЛИЧНЫЕ ФОРМЫ ГЛАГОЛА В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

М. Е. АСАТРЯН

Р е з ю м е

В армянской, как и в других грамматиках, неличные формы глагола долгое время рассматривались вне глагола, как самостоятельная часть речи. Вопрос таким образом решен, например, в грамматиках А. Айтыняна и С. Паласаняна. Своеобразную точку зрения относительно неличных форм глагола развивает М. Абебян. Под глаголом он подразумевает только личные формы, а неличные формы относит к существительному, прилагательному или наречию. Толкование неличных форм глагола М. Абебяном подверглось критике со стороны Г. Севака и А. Гарибяна.

Изучению неличных форм глагола с исторической точки зрения посвящена работа А. Абрамяна «Неличные формы глагола и их морфологическое значение» (1953 г.). В синхронном аспекте рассматриваются неличные формы глагола восточноармянского языка тем же автором в работе «Глагол в современном армянском языке» (1962 г.). Этот вопрос исследуется с позиций новейшей структурной лингвистики в труде Э. Агаяна «Склонение и спряжение современного армянского языка» (1967 г.).